ռում էին նաև այլ վասալական պարտավորություններ և պաշտոններ։ Նախքան դրան անցնելը, հարկավոր է պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք Կիլիկիայում գոյություն են ունեցել ասպետական կարգեր, իսկ եթե գոյություն չեն ունեցել՝ ապա ի՞նչ կարգով են հանդես եկել։ Հետաքրքիր է նաև ասպետների օծման կարգը։ Այսպես, մատենագրական արխիվները մի շարք վկայություններ են հաղորդում թագավորի կամ բերդատեր իշխանների որդիներին և նրանց ազատներին ձիավորի կամ ասպետի կոչում շնորհելու ծիսակատարության մասին։ «Ձիավորեցուցանելու» կամ ասպետ ձեռնադրելու ծիսակատարությունները, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Կիլիկիայում, զուգադիպում և կատարվում էին որևէ մի նշանավոր դեպքի ժամանակ կամ դրա առթիվ։ Այդպիսի դեպքեր էին՝ հաղթանակած ճակատամարտին հաջորդող տոնախմբությունները, ջրօրհնեքի կամ թե թագավորի օծումը, թագաժառանգի ծննդյան կամ մկրտության հանդեսները և այլն։ Թե ինչ արտաքին տեսք և բովանդակություն է ունեցել «ձիավորացուցանելու» ծիսակատարությունը, այդ մասին աղբյուրներում պահպանվել են շատ քիչ տեղեկություններ, որոնցից երևում է, որ Կիլիկիայում «ձիավորացուցանելու» ծիսակատարությունները, ինչպես Եվրոպայում, ընդունել են բարդ ձևեր, որտեղ, ըստ Սելդոնի, կատարվում էին պալատական և եկեղեցական հանդեսներ։ Առաջին դեպքում տոնահանդեսներ էին կատարվում ասպետի ձեռնադրման առթիվ, իսկ եկեղեցականի ժամանակ տեղի էր ունենում զոհաբերություն և հոգևոր պատարագ։ Օրինակ, 1284 թ. Լևոն Գ-ը Աստվածահայտության տոնին «ձիավորեցուցանում» է իր երկու որդիներին՝ Թորոսին և Հեթումին, նրանց թվում «և այլ մանկունք իշխանաց և արք յարքունական և սպասաւորաց յորում հանդիսի ներկա գոլով Յովհաննէս Երզնկացի խոսեցաւ երկար ճառ «Ամենայն ածն որ ընդ իշխանութեամբ» խորագրով»[65]։

Վերևում հիշատակված «մանկունքի» տարիքը չէր անցնում 11-ից 18 տարեկան հասակը, թեև «Անտիոքի Ասսիզներում» ասված է, որ «ձիավորեցուցանելու» հասակը 15 տարին է, սակայն պարոնը կարող էր խախտել այդ տարիքը, եթե ինքը ցանկանար. «Եւ ըղորդ հասակն տասն հինգ տարին է, և ձիաւորութիւն, զի առանց ձիաւորութեան չկա հասակ և պարոն կարէ կանոնուխցնել զհասակն չորս հինգ տարի, ընդ ներբո է, քանի ուզենա»[66]։

Կիլիկիայում «ձիավորեցուցանելու» տարիքը հաճախ խախտվում էր։ Այսպես, 1259 թ. ձիավորության աստիճանը ստացող Հեթում Ա-ի որդու՝ Թորոսի տարիքը 20-ից անց էր[67]։ Իսկ 1284 թվին ձիավորության աստիճանը ստացող Լևոն Գ-ի որդի Թորոսը 14 տարեկան էր, Հեթումը՝ 18[68]։

Թեև աղբյուրները քիչ են խոսում «ձիավորեցուցանելու» ծիսակատարությունների բովանդակության մասին, սակայն զուսանքով են խոսում ձիավորների հմուտ ձիավարժության մասին։ Այսպես, Վիլհերբանդտ Օլդենբուրգցին 1211 թվականին Սիսում տեղի ունեցած Ջրօրհնեքի արարողա-ծիսակատարության նկարագրության մեջ գրում է. «իսկ թագաւորն և զօրականք ի դաշտ անդր դիմէին, և պալատակալ երիվարօքն արշավակի վազս առեալ

---

65 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 483—484։

66 Assises d'Antioche, Trad. L'Alishan, 1876, p. 18.

67 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 480—482։

68 Նույն տեղում, էջ 484։